ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբեր 2022 թվականի N 69-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով, 25-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 28/21-Լ որոշման հավելվածի 8-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 308-Ա որոշման հավելվածի երկրորդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ – ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Հայաստանի Հանրապետության թվային փոխակերպման (թվայնացման) գործընթաց	Մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչություն
2	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի վարկային և դրամաշնորհային ծրագրեր	6-րդ վարչություն

3	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն	Զբաղվածության ծրագրի իրականացման գործընթաց	2-րդ վարչություն
4	Գեղարքունիքի մարզպետարան	Ֆինանսատնտեսական գործունեություն	1-րդ վարչություն
5	Կապանի համայնքապետարան	Ֆինանսատնտեսական գործունեություն	9-րդ վաչություն
6	Ծաղկաձորի համայնքապետարան	Ֆինանսատնտեսական գործունեություն	10-րդ վաչություն
7	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե որպես նվիրաբերություն փոխանցված միջոցների օգտագործման նկատմամբ	3-րդ վարչություն
8	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Անտառօգտագործման գործընթաց	4-րդ վարչություն
9	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրեր	5-րդ վարչություն
10	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում	5-րդ վարչություն
11	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Գյումրու քաղաքային ճանապարհների վարկային և դրամաշնորհային ծրագիր	5-րդ վարչություն

12	ՀՀ առողջապահության նախարարություն	Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	7-րդ վարչություն
13	ՀՀ առողջապահության նախարարություն	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	7-րդ վարչություն
14	ՀՀ առողջապահության նախարարություն	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	7-րդ վարչություն
15	ՀՀ առողջապահության նախարարություն	Մոր և մանկան առողջության պահպանում	7-րդ վարչություն
16	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Պետական բյուջեի մուտքերի ձևավորման կանոնակարգված գործունեություն	8-րդ վարչություն
17	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում	8-րդ վարչություն
18	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերում (ՍՌՏ), ինչպես նաև դրանց առանձին հանգույցների և սարքավորումների՝ ձեռքբերման, արդիականացման, վերականգնման, նոր նմուշների մշակման և արտադրությանն ուղղված գործունեություն	10-րդ վարչություն

»:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ